Ա. «Դուռնս հունփայ յիշատակի.
Սարգիս անուն վարպետի.
Ղանտիլ անուն այս վարպետի
Սա աշակերտ գոլ անուանի
Եւ ծնողացն իսկ սորին
Տէր Յովակիմ և Կիւլզարին
Եղբարց և քերց ընդ սոսին
Տէր Առաքելին և Շմաւոնին
Այլ և իւրոցն աշակերտաց
Եւ ամենայն ազգականաց.
Հազար հարիւր վաթսուն ի թիւ
Տուք ողորմիս լիով սրտիւ»։

Բ. «Դուռըս հունփայ Էջմիածնայ
Ի մէջ Սրբոյն Յակոբայ
Ղանտիլ անուն վարպետի
Կեսարացի և մահտեսի.
Իւրոյ հոգւոյն է յիշատակ
Եւ ծնողաց իւրոց համակ
Առաքելին և Ղուտրէթին
Եւ կողակցացն ընդ նոսին
Երեք եղբարցն և քուերն իմ
Կիւլիզարին և իւր որդւոյն Սէֆէրին
Եւ դստերացն հանդերձ սովին
Որք հանդիպիք տուք զողորմին»։

ՍԱՐԳԻՍ ՔՀ.— Գրիգոր պտրք. Պարոնտէրի ժամանակ Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Ներսէս Լամբրոնացիին Մեկն. Աղօթից Ս. Յովհաննու Աւետարանչի հանգստեան, Եղիշէ վրդ.ի Մեկն. Հայր մերին, Եսայի Նչեցւոյ Մեկն. Դանիէլի և Մեկն. Մարգարէին Եզեկիէլի գիրքերը, որոնք ամփոփուած են մէկ ձեռագրի մէջ և կը գտնուին վանքին մատենադարանը (ՄՁ. Թ. 929)։

ՍԱՐԳԻՍ ՔՀ. ԷՏԻՆՃԻԿՅԻ.— 1709ին բարգման Ս. Յակոբի վանքին։

ՍԱՐԳԻՍ ՔՀ. ԽԻԶԱՆՑԻ.— Ռի (= 1571)ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Բ. բոլորգիր Աւետարան մը, Հերապետ կուսակրօն քհ.ին համար, կը յիշէ իր ծնողքն ու զա-